ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Էլ. հասցե sovxoz444@mail.ru

N 01-215

«05» 12 2018թ.

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ. 5-29-35

ՀՀ Արմավիրի մարզպետ

Պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 27,28,29 որոշումները:

Առդիր՝ 44 թերթ:

Ոսկեհատ համայնքի
ղեկավար՝ Գ. Ներսիսյան

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«03» դեկտեմբերի 2018թ. թիվ 27-Ա

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄԷ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 11 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	*ԿՈՂՄ*	*ԴԵՄ*	*ՁԵՌՆՊԱՀ*
ԱՐՄԵՆ ԳՅՈՉԱԼՅԱՆ	----------	----------	----------
ՄԵՐՈԲ ԴԻՇԼԱՆՅԱՆ	----------	----------	----------
ՆԻԿՈԼԱՅ ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆ	----------	----------	----------
ՆՈՐԱՅՐ ՕՀԱՆՅԱՆ	----------	----------	----------
ՄԱՅԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ	----------	----------	----------
ՌԱՖԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ	----------	----------	----------
ԱՐՄԵՆ ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆ	----------	----------	----------
ԿԱՐԱՊԵՏ ԱԶԻԶՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ*

Կ. Տ.

2018 թվական «3» դեկտեմբերի
Գ.Ոսկեհատ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի
ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ N 27-Ա Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 11 նիստի օրակարգի հաստատում.

/ Զեկուցող Գ.Ներսիսյան/

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ

ՏԱՐԱԾՔՈՒՄ, 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐՎԱ, ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ Զեկուցող Գ.Ներսիսյան/

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի անապահով ընտանիքներին հինգ հարյուր վաթսունհինգ հազար դրամ սոցիալական օգնություն տրամադրելու մասին:

/ Զեկուցող Գ.Ներսիսյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

03 դեկտեմբերի 2018 թվականի N28-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ, 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐՎԱ, ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետի,<<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝

ավագանին որոշում է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի վարչական տարածքում, 2019 թվականի բյուջետային տարվա համար, տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	*ԿՈՂՄ*	*ԴԵՄ*	*ՁԵՌՆՊԱՀ*
ԱՐՄԵՆ ԳՅՈԶԱԼՅԱՆ	----------	----------	----------
ՆԻԿՈԼԱՅ ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆ	----------		----------
ՄԵՐՈԲ ԴԻՇԼԱՆՅԱՆ	----------	----------	----------
ՆՈՐԱՅՐ ՕՀԱՆՅԱՆ	----------	----------	----------
ՄԱՅԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ	----------	----------	----------
ՌԱՖԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ	----------	----------	----------
ԱՐՄԵՆ ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆ	----------	----------	----------
ԿԱՐԱՊԵՏ ԱԶԻԶՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ*

Կ. Տ.

2018 թվական «03» դեկտեմբերի

Գ.Ոսկեհատ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ, 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ, ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ>> N28-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 3-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի վարչական տարածքում 2019 թվականին տեղական տուրքերի և վճարների տեսակների ու դրույքաչափերի սահմանման մասին>> N29-Ն որոշման ընդունումը պայմանավորված է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետի պահանջներով և դրա անհրաժեշտությունը կայանում է, որ այն ուղղված է համայնքի կողմից տեղական տուրքերի և վճարների գանձման հավասար մատչելիությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ*

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի ռսկեհատի

համայնքի ավագանու

2018 թվականի դեկտեմբերի 3-ի

N 28-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ, 2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ,ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7 500 ՀՀ դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար

15 000ՀՀ դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար

25 000ՀՀ դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար մինչև 25 000ՀՀ դրամ.

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 50 000ՀՀ դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500ՀՀ դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2500ՀՀ դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500ՀՀ դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով

սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 2500ՀՀ դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000ՀՀ դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000ՀՀ դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝150 ՀՀ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է15000ՀՀ դրամ.

գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000ՀՀ դրամ.

6. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500ՀՀ դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000ՀՀ դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500ՀՀ դրամ.

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700ՀՀ դրամ:

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 500ՀՀ դրամ:

8. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5 000ՀՀ դրամ:

Համայնքի տարածքում տեղական վճարները սահմանվում է.

9. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 7 500ՀՀ դրամ:

10.Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների

համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5 000ՀՀ դրամ:

11. Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ 5 000ՀՀ դրամ:

12. Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար.՝

1) ըստ հասցեի հաշվառում ունեցող և առանց հաշվառման /փաստացի/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար սահմանվում է ամսական վճար՝ 50 ՀՀ դրամ.

2/ Համայնքի իրավաբանական անձանց համար.

բ/ առևտրի/ այդ թվում շուկաների/ հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների համար 25 ՀՀ դրամ.

գ/ արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ համար 5ՀՀ դրամ.

դ/ կրթական,մշակութային,առողջապահական, սպորտային գիտահետազոտական, շինությունների համար 2 ՀՀ դրամ.

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«03» դեկտեմբերի 2018թ. թիվ 29-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով .

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ոսկեհատ համայնքի անապահով ընտանիքներին տրամադրել հինգ հարյուր վաթսունհինգ հազար դրամ սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
ԱՐՄԵՆ ԳՅՈՉԱԼՅԱՆ	----------	----------	----------
ՄԵՐՈԲ ԴԻՇԼԱՆՅԱՆ	----------	----------	----------
ՆԻԿՈԼԱՅ ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆ	----------	----------	----------
ՆՈՐԱՅՐ ՕՀԱՆՅԱՆ	----------	----------	----------
ՍԱՅԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ	----------	----------	----------
ՌԱՖԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ	----------	----------	----------
ԱՐՄԵՆ ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆ	----------	----------	----------
ԿԱՐԱՊԵՏ ԱԶԻԶՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ. Տ.

2018 թվական դեկտեմբերի «03»
Գ. Ոսկեհատ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2018թ-ՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի
ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ N 29-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

1. Հովհաննիսյան Անուշ-30.000 դրամ
2. Աբգարյան Դերենիկ-30. 000 դրամ
3. Պետրոսյան Հռիփսինե-15. 000 դրամ
4. Թասլակյան Կարեն- 30. 000 դրամ
5. Խաչատրյան Անդրանիկ-30. 000 դրամ
6. Քեշիշյան Մերի-30. 000 դրամ
7. Հարությունյան Վիկտորյա-30. 000 դրամ
8. Իսկանդարյան Մարիամ -30.000 դրամ
9. Ալեքսանյան Մարատ-20.000 դրամ
10. Հակոբյան Արմեն-30.000 դրամ
11. Բալեյան Արևիկ-30.000դրամ
12. Կիրակոսյան Մարգարիտա-20.000դրամ
13. Մանուկյան Արամայիս-20.000դրամ
14. Մինասյան Դոնարա-20.000դրամ
15. Գալստյան Ֆենյա -20.000դրամ
16. Բակալյան Արփենիկ-20.000դրամ
17. Ալեքյան Անդրանիկ-20.000դրամ
18. Քեշիշյան Մարո-20.000դրամ
19. Մարգարյան Սերգեյ-20.000դրամ
20. Կարինյան Էլմիրա-20.000դրամ
21. Գրիգորյան Նազիկ-25.000դրամ
22. Գրիգորյան Ռազմիկ-30.000դրամ
23. Գևորգյան Սյուզաննա-25.000դրամ